

ՆՅՈՒԹԵՐ ԿՐԵՏՏԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1981 թ. նոյեմբերին Թեսաղոնիկեի արխատոսելյան համալսարանի և Աթենքի տեղագիտության հրավերով լինելով Հունաստանում, այցելեցի նաև Բյուզանդական ուսմանց ընկերությունը և հանդիպում ունեցա նրա նախագահ, մեծանուն թուրքալեզու Նիկոլայոս Տոմազակիսի հետ: Հայագիտության ու բյուզանդագիտության շուրջ զննացած մեր խոսակցության ընթացքում ն. Տոմազակիսը, որ ծագումով Կրետեից է, ասաց, որ ժամանակին հրատարակել է մի գիտական հոդված՝ նվիրված Կրետեի միջնադարյան հայկական գաղութի պատմությանը, միաժամանակ տեղեկացնելով, որ Կրետեում կան միջնադարյան տապանաքարեր՝ հայերեն արձանագրություններով: Այդ արձանագրությունները բաժանա՞ծ էր և տարի առաջ հրատարակել է հայագիտական հետազոտող Դիմիտրիոս Սավլանը: Ն. Տոմազակիսը սիրալիրությամբ մեզ տրամադրեց տվյալ հոդվածները հայերեն թարգմանությամբ Հայաստանի գիտական որևէ հանդեսում հրապարակելու համար:

Ինչպես կհամոզվի ընթերցողը, երկու հոդվածներն էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հունաստանի միջնադարյան հայկական գաղութի պատմության ապագա հետազոտողի համար, գաղութ, որի վերաբերյալ շատ քիչ բան է գրված:

Հայերի ծանոթությունը Կրետե կղզու հետ ավելի քան հազարամյա պատմություն ունի: Ինչպես հայտնի է Կոստանդին Միրանաժին կայսրի Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին՝ գրքից, գեոև հիշյալ կայսեր հոր, Լևոն 6-րդի (886—912 թթ.) օրոք արաբների ձեռքում գտնվող Կրետե կղզին կատարված արշավանքին բյուզանդական բանակի կազմում մասնակցում էին Սեբաստիա բանակաթեմից 965 և Անատոլիկոն բանակաթեմից 500 հայ հանձնակիրներ: Հայտնի է նաև, որ 949 թ. ևս Կրետե կատարված արշավանքին մասնակցում էին Անատոլիկոն բանակաթեմից՝ 1000, Թրակեսիոն բանակաթեմից՝ 600 հայեր, ինչպես և՛ Խարակլիկի բանակաթեմից²:

Նիկեիոյի Փոկաս կայսրը (963—969 թթ.) դեռևս գահին չնստած, 961 թ. վերանվաճեց Կրետեն և արաբական երկարատև (այն սկսվել էր 823 թ.) տիրապետության ժամանակ նվազած քրիստոնյա բնակչությունն ստվարացնելու նպատակով բազմահազար քրիստոնյաներ վերաբնակեցրեց, այդ թվում և հայեր: Ահա այս ժամանակվանից էլ սկիզբ է առնում Կրետեի հայկական գաղութի պատմությունը:

1204 թ. իսլամաց չորրորդ արշավանքի ժամանակ Կոստանդնուպոլիսն ընկավ լատինների ձեռքը, և Բյուզանդական կայսրությունը ժամանակավորապես դադարեց գոյություն ունենալուց: Կրետե կղզին անցավ վենետիկցիների տիրապետության տակ, որը տևեց մինչև 1669 թ., երբ կղզին գրավեցին օսմանցիները: Ն. Տոմազակիսն իր հոդվածում ցույց է տալիս, որ և՛ վենետիկի, և՛ օսմանցիների տիրապետության ժամանակ չղադարեց հայոց հոսքը դեպի Կրետե և այդ բանը հաստատում է ինչպես վենետիկի դիվաններում պահպանված արձեռագրեր, փաստաթղթերով, այնպես և Կրետեում գտնված մի շարք տապանաքարերի հայերեն արձանագրություններով:

Ն. Տոմազակիսը, հասկանալի է, տապանաքարերի հայերեն արձանագրություններն ընթերցելու փորձ չի կատարել: Նրան չեն կարողացել օգնել և այն հայերը, որոնց օգնության է դի-

¹ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ», գիրք Բ, Կոստանդին Միրանաժին, թարգմանություն բնագիրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 145:

² Նույն տեղում, էջ 149—150:

մէլ նաւ Բալց Դ. Սաւալանին ընդհանուր առմամբ այդ բանը հաջողվել է: Դժբախտաբար, հունական այդ հանդեսի (որտեղ Սաւալանը հրատարակել է իր հոդվածը) տպագրական կարողութիւնները թույլ չեն տվել հոդվածագրին հրատարակել արձանագրութիւնների հայերեն բնագրերը: Նա ստիպված է եղել հայերեն բնագրերը տառադարձել հունարեն, դրանից բխող բոլոր հետեւանքներով: Ինչպես հայտնի է, հունարեն այբուբենը հայերենի համեմատութեամբ աղքատիկ է:

Հայերեն հիշյալ արձանագրութիւնները շատ մեծ արժեք են ներկայացնում այն իմաստով, որ ուղղակի՝ ցույց են տալիս հաւանաբար XVII դ. երկրորդ կեսին Կրետե հաստատված հայերի բնակութեան նախնական վայրը, նաև թե այդ ժամանակներում տեղի ունեցած հայոց արտագաղթը որտեղից էր սկիզբ առել: Հանգուցյալները, որպես կանոն, քանաքանուկ են և եթէ վախճանվել են XVIII դ. 20-ական թվականներին, առավել կամ պակաս հավանականութեամբ 60—70 տարեկան հասակում, ապա Քանաքեռում ծնված պիտի լինեին XVII դ. 50—60-ական թվականներին:

Որ XVII դ. երկրորդ կեսին հայերի գաղթը Կրետե կղզի մեծ ծավալ է ունեցել, վկայում են Կրետեի շերակիւն ռազարի հոգևոր դատարանի դիվանի 1670—1700 թթ. փաստաթղթերը, որոնք հույն թարգմանիչ Ն. Ստավրինիդիսի վկայութեամբ, շատ հարուստ են Կրետեի մայրաքաղաք Խանդարի (Կանդիա) հայերի վերաբերյալ տեղեկութիւններով, այն աստիճան, որ թարգմանչին ենթադրել է տայիս, թե այդ քաղաքը հայերով էր բնակեցված: Ստավրինիդիսը ուսումնասիրել է 1670—1700 թթ. փաստաթղթերը, բայց դա չի նշանակում, որ հայերի վերաբերյալ տեղեկութիւններ չկան նախորդող և հաջորդող թվականները կրող փաստաթղթերում: Այս շրջանում Կրետեում հաստատված հայերը հավանաբար արհեստավորներ և վաճառականներ էին: Խնդրոս առարկա վիմագիր արձանագրութիւններից հայտնի է, որ վախճանված քանաքանուկ Հուսեփիանի հայրը խոշա Կյուրեղն էր:

Կրետեում հաստատված հայերը չէին խզում իրենց կապերը մայր հայրենիքի հետ: Այդ հայերի ծնունդ էր նշանավոր կաթողիկոս Աբրահամ Կրետացին, որը հենց Կրետեի մայրաքաղաք Խանդարսից էր:

Ստորև մեր հայերեն թարգմանութեամբ բերվում են Ն. Տոմազակիսի հոդվածի հայերեն մերաբերող հատվածը և Դ. Սաւալանի հոդվածն ամբողջութեամբ: Սաւալանի՝ հունարեն տառերով հրատարակած հայերեն արձանագրութիւնները բերում ենք հայերեն, դանց առնելով արձանագրութիւնների, սովյալ դեպքում միանգամայն ավելորդ, Սաւալանի հունարեն թարգմանութիւնները, առանձին դեպքերում կատարում ենք ուղղումներ, տալիս ծանոթագրութիւններ. բոլոր դեպքերում փակագծերի մեջ նշելով մեր անվան ու ազգանվան սկզբնատառերը:

ՉՐԱԶ ԲԱՐՔԻԿՅԱՆ

ΝΙΚΟΛΑΟΣ Β. ΤΩΜΑΔΑΚΗΣ, Συμβολή εις τήν μελέτην τῶν σλαβικῶν, ὁρμενικῶν καὶ τσούρκικῶν ἐποικισθεῶν ἐν Κρήτῃ. Ἑπετηρίς Ἑταιρίας Κρητικῶν Σπουδῶν, τομὸς Β', Ἀθήναι, 1939, σελ. 7—19.

ՆԻԿՈՒԱՅՈՍ Վ. ՏՈՄԱԴԱԿԻՍ, ներդրում Կրետեում սլավոնական, հայկական և թուրքական վերաբնակեցումների մասին ուսումնասիրութիւնների մեջ, Կրետական ուսմանց ընկերության Տարեգիրք, Բ. Բ, Աթենք, 1939, էջ 7—19:

Ստորև հրապարակվող հետազոտութիւնը հարկավ չի սպառում իր շոշափած թեմաները, սկզբից ենթ էլ այն շունքի այդպիսի նպատակ: Պարզապես հետազոտութեան համար ի մի է բերում վերջին հազարամյակում տարբեր ժողովուրդներին՝ Կրետեում վերաբնակվելու հարցերը, ժողովուրդներ, որոնք չկարողացան փոփոխել նրա էթնիկական դեմքը, կամ էլ ի մի է բերում հարցին վերաբերող նյութեր, որոնք ժամանակի ընթացքում ստվարանալով, հնարավորութեան պիտի տան ավելի որոշակի եղրակացութիւնների հանգնելու:

Ա.

Վերջերս ես ցույց տվեցի¹, որ անցյալում տիրապետող դարձած համոզմունքը, թե արաբները Կրետեն մարդաթափ արեցին իր հույն բնակչութեանց այն իսլամացնելով և ստիպեցին

¹ Νικολάος Β. Τωμαδάκης, Σλαβοὶ ἐν Κρήτῃ. Τὸ Ροδόβάνι — Τὰ Καράνισυ, Ἑπετηρίς Ἑταιρίας Κρητικῶν Σπουδῶν, Α' (1938), էջ 425—431.

Ներկեփոր Փոկասին կղզու ուղղափառ բնակչությունը լրացնելու նպատակով այստեղ հաստատել ցակոնները², սլավոնների և հայերի, սկիզբ է առել ոչ թե բյուզանդական պատմիչներից, այլ Վարք սրբոցներից: Ես համաձայն չեմ ինձնից առաջ զորոնների՝ կղզու արտաբացման մասին կարծիքներին, քանի որ Կրետեի բնակչության ճնշող տարրը միշտ էլ գյուղականն էր: Ընդունում եմ, որ 823 թվականից հետո քաղաքային բնակչությունը գրեթե վերացավ ու դրա հետ մեկտեղ նաև հունական քաղաքային բնակչությունը, ինչպես որ եղավ 1669 թվականից³ և, ավելի փոքր մասշտաբով՝ 1204 թվականից հետո⁴: Նվաճողները, լինեն նրանք արաբներ, վենետիկցիներ, թե փոքրեր, իրենց դիրքերը ապահովելու համար պետք է իրենց վարչական, հասարակական և տնտեսական կյանքը կազմակերպեին սեփական սխստեմով, ստեղծեին կառավարող դասակարգ (ֆեոդալներ, առևտրականներ), որը պիտի նաև տիրեր ռազմականորեն, ստիպված լինելով կղզին պաշտպանել արտաքին ներխուժումներից, ինչպես և ապահովել նրա ներքին անգործը: Հասարակության վրա տիրող նոր դասակարգը ստեղծեց Բյուզանդիան՝ X և XII դդ., այնտեղ հաստատելով ազնվականական ընտանիքներ: Այս ընտանիքները, ուժեղ հենարան ունենալով ի դեմս տեղացիների (իրենց համար բնական միջավայր, լեզու), ժամանակի ընթացքում ձուլվեցին նրանց մեջ և վենետիկի տիրապետության շրջանում ոչ միայն փրկեցին իրենց հունականությունը, այլև պայքարելով տիրողների դեմ և սրով ապահովելով իրենց համար ավելի ու ավելի լայն իրավունքներ, կարողացան նրանց տարալուծել: Վենետիկցի ազնվականության հունականացումը կապված էր, հարկավ, և նրա սեփական շահերը գիտակցելու հետ, շահեր, որոնք չէին համընկնում մետրոպոլիայի ազնվականների շահերին, ինչպես և այլ պատճառների հետ, որոնցից մենք նշեցինք նաև այդ ժամանակների պարտադիր ունեթափ: Սակայն այդ հունականացումը կապված է գլխավորապես բյուզանդական ազնվականության կուռ հունականությունից հետ, ազնվականություն, որը հունա-բյուզանդական մշակույթի հետևողական կրողն էր:

Որ Կրետեում հույն գյուղացիները միշտ էլ, անգամ արաբական տիրապետության ժամանակ, կազմել են բնակչության բացարձակ մեծամասնությունը, հաստատում է ամեն տեղից այստեղ հոսած ոչ հույն զանգվածների ուժացումը: Կրետեում, արաբական տիրապետությունից անմիջապես հետո, երբեք և ոչ մի տեղ վերաբնակների որևէ փոքրամասնություն տիրող դիրք չգրավեց, ոչ էլ պահպանեց իր լեզուն: Որ տվյալ դեպքում լեզվի հարցը շատ բան է նշանակում, ոչ ոք չի կարող ժխտել: Որպես կանոն, իհարկե, ձուլվում է առավել դժվար լեզվով խոսողը առավել դյուրին լեզվով խոսողից, տվյալ դեպքում ավելի բնական էր, որ հայերն ու արաբները ձուլվեին հույների կողմից, իսկ սլավոններն ու թուրքերը ձուլվողի դերում պիտի հանդես գային: Սակայն փոքրամթիվները երբեք չեն ձուլվ մեծամթիվներին: [Օտար] լեզվական մնացորդները չնչին են այսօր, նրանք չնչին էին նաև 300 տարի առաջ, երբ կրետական մշակույթը իտալական վերածննդի հետ շփվելով ծաղկում ապրեց:

Ցայսօր ուսումնասիրողները ուշադրություն դարձրին Կրետեի՝ բյուզանդական երկրորդ

² Պելոպոնեսում բնակվող ցեղ, ծակոնները համարվում են հին լակոնների (լակեդեմոնացիների) հետերոգենը: Արտահայտվել են և կարծիքներ, որ սլավոններ էին: Նրանց մասին **վերջին ուսումնասիրությունն է.** Χαραλαμπος Π. Συμεωνίδης, Οι Τσακωνες και η Τσακωνία. Συμβολή στη έρευνα της τών όντοματων και τών όμοιων του Βυζαντινού θασμου τών καστροφολάτων. Βυζαντινά κείμενα και μελέται τού Κέντρου Βυζαντινών έρευνών Φίλοσοφικῆς Σχολῆς 'Αριστοτελείου Πανεπιστημίου Θεσσαλονίκης, τόμος 5, Θεσσαλονίκη, 1972 (Հ. Բ.):

³ Նկատի ունի Կրետե կղզու նվաճումը Օսմանյան կայսրության կողմից (Հ. Բ.):

⁴ Նկատի ունի Կոստանդնուպոլսի գրավումը Զորորդ խաչակրության կազմակերպողների կողմից և Բյուզանդական կայսրության ժամանակավոր վերացումը (Հ. Բ.):

⁵ 'Επετηρίς 'Εταιρίας Κρητικῶν Σπουδῶν, Α' (1938), էջ 426, Ժառ. 1. Հարկավ, ունիաթառ XVI դ. վերջի գլուտ է, երբ և զարգացավ այդ գարշելի սխտեմը, որի դեմ այնքան պայքարեցին կրետացի աստվածաբաններ Պիզասը, Լուկարիսը, Ցանգարունը և ուրիշներ: Ունկայն գործնականորեն ունիան պարտադրվում էր Կրետեում նաև ավելի հին ժամանակներում, երբ [հույն] հոգևորականներին ստիպում էին խոստովանել filioque-ն [լատիներեն բառ է, նշանակում է «և Որդուց»: Կաթոլիկ եկեղեցու հիմնական դոգմաներից մեկի համաձայն սբ. Հոգին բխում է ոչ միայն Հորից, այլև Որդուց, այն է Քրիստոսից—Հ. Բ.] և [պապի] առաջնությունը, ընթերցել Ֆլորենցիայի եկեղեցական ժողովի հավատամքը և հետեւել լատիններին ոչ ուղղափառ եկեղեցու տոներին թափոններին:

շրջանի (1961—1964 թթ.) վերաբնակեցումների վրա և այդ բանը կապեցին արաբական տիրապետության շրջանում տեղի ունեցած քրիստոնյա բնակչության նոսրացման, ինչպես և նման այլ պատճառների հետ. օրինակ՝ հավատարիմ զորամասերի հաստատում, ինչպիսիք հայերին էին, որոնք կարող էին օգտագործվել կղզու ներսում կարգավանոն հաստատելու և նրա պաշտպանությունն ապահովելու համար։ Անվաճիկ պետք է ավելացնել և այլ պատճառներ։

ա) այն ժամանակ տիրող ֆեոդալական սխտեմը նախատեսում էր պետական, մասնավոր և եկեղեցական ձորտերի առկայությունը։ Նրանց ազատ արձակելը և տաժանակիր աշխատանքներին, հիվանդություններին ու դժբախտ պատահարներին ձորտերի թվի նվազումը, պահանջ էր առաջացնում նրանց շարքերի լրացման։ Դրանից հետևում էր, որ որպես ձորտ էին օգտագործվում ռազմագերիները, այդ թվում և Վենետիկի նավատորմի դի կողմից գերված ժովահենները՝ և ուրիշներ, թուրքեր, սլավոններ և այլն։

բ) XIII դ. օսմանցի թուրքերի երևալը Փոքր Ասիայում, նրանց պետության տարածքի ընդարձակվելը ի հայտիվ կոստանդնուպոլսի կայսրության, սելջուկյան պետության վերացումը և Ալեքիսի, Ասուրիանի (Մագնեզիայում), Մուտեսեի (Լիկիա-Կարիայում), Իկոնիայի (կրետացիներին ծանոթ կարամանցիների) փոքր պետությունների առաջացումը, օսմանցիների պատերազմները ալի փոքր սլետաթյունների դեմ, վերջապես լենկ Թեմուրի մեծ արշավանքը, պատճառ դարձան ժողովրդական դանդաղաների տեղաշարժերի՝ Փոքր Ասիայից Արևմուտք։ Ես դրանով հմբացատրում եմ իրիկիայի, Մեծ Հայքի և Պոնտոսի հայերի տեղաշարժը դեպի կղզիները։

Գ

Մենք արդեն նշել ենք բյուզանդական հեղինակների հաղորդած տեղեկությունները X դ. հայերի՝ Կրետե վերաբնակվելու մասին և շեշտել, որ նրանք ներկայացնում էին մասը այն հայկական դորքերի, որոնցով պատերազմում էր Նիկեիոյ Փոկասը։ Մենք ևս այդ ժամանակաշրջանի վերաբնակեցումների հետ կապեցինք Ապոկորոնոսում, Ռեթիմնեում և Սիտիայում⁶ հանդիպող Արմենի՝ (Արմենի) անունը կրող գյուղերը, Արմենիուսն-ն (Արմենիան)՝ Ամարիոսում, Արմենիոսորիոն-ն [Արմենոչարիոն — Թարգմանաբար նշանակում է հայկական գյուղ—Հ. Բ.]՝ Կիսամոսում (Պանաթիոս), Արմենոչիուսն (Արմենոչիւս)՝ Մոնոֆացիոսում⁷, Հիշյալ տեղանուններից բացի կան և որոշակի բնակավայր նշանակող Արմենոլամպոսը (Արմենոլամպոս—Թարգմանաբար նշանակում է հայկական դաշտ—Հ. Բ.)՝ Սելինոսի Սկլափոպոլայում⁸, Արմենոխառեղիսն (Արմենոխառեղիս—նշանակում է հայկական բերդ—Հ. Բ.)՝ Ռեթիմնեում⁹ և Արմենոսիտրան (Արմենոստրա—հայկական քաղ, հայկական ժայռ—Հ. Բ.)՝ Վիանոսում¹⁰։

Այժմ կարծում եմ, որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել Վենետիկի տիրապետության ժամանակ Կրետեում հայերի վերաբնակեցումների վրա, որոնցով ուսումնասիրողները շատ քիչ են զբաղվել¹¹։

⁶ Ապոկորոնոս, Ռեթիմնե, Սիտիա և դրանց հաջորդող տեղանունները Կրետե կղզու տարբեր շրջաններում գտնվող վայրեր ու գավառներ են (Հ. Բ.)։

⁷ Ապոկորոնոսի Արմենիոն-ն 1822 թ. Հեղափոխական Ժողովի կողմից վերանվանվեց՝ Էլեֆթերուպոլիս [Թարգմանաբար նշանակում է Ազատության քաղաք—Հ. Բ.], քանզի այնտեղ ստորագրվեց Կրետեի առաջին կառավարության հռչակման ակտը, իսկ թուրքերի կողմից՝ Ֆրեստըլը։ Այս անուններից ոչ մեկը տիրող չդարձավ։

⁸ Ն. Տասթաքչի, Տεατιστικὴ Κρήτης, 'Αθήναι, 1890։ 18-րդ և 52-րդ էջերի տարածականներում։ Տετ. Զανθουδίδης, Χανδα—'Εράτλειον, 'Ιστορικά σημειώματα ἐν 'Ηρακλείῳ Κρήτης, 1927, էջ 30—31, Արմենոչիա—ն ծագում է Արմենադոչիայից։

⁹ Ս. Կրիսթի, Νέα ιστορία Κρήτης, 'Αθήναι, 1937, I, էջ 743։

¹⁰ Ն. Καλομενοπούλου, Κρητικά, 'Αθήναι, 1894, էջ 29։

¹¹ Ս. Παπαγεωργίου, Περὶ τῶν σημασιῶν τοῦ ῥήματος ἀρμενίζω, 'Αθηνα—ΚΑ' (1912), էջ 467։

¹² Առաջինը, ինչքան գիտեմ, Սպ. Մ. Թեոտոկիսն էր (Σπ. Μ. Θεοτόκης, Πρεσβεία 'Αρμενίων πρὸς τὴν Βενετικὴν Γερουσίαν 1 'Ιουλίου 1363. 'Επετηρίς 'Εταιρίας Βυζαντινῶν

Որ Կրետեի ղեկն XIV դ. սկզբին առևտրական կապեր ունեւր Հայաստանի¹³ հետ, վկայում են Վենետիկի սենատի որոշումները: Այսպես, 1302 թ. հունիսի 5-ի որոշումից տեղեկանում ենք, որ Վենետիկի առևտրական նավատորմիցը վերադառնալով Հայաստանից, ամենայն հավանականությամբ Կիլիկիայի հայկական պետությունից, անցնում էր Կրետեով¹⁴: Իսկ մի այլ՝ 1333 թ. դեկտեմբերի 14-ի որոշումից պարզվում է, որ Կիպրոս¹⁵ և Հայաստան զնացող բռնատար նավերը պետք է հանդիպեն Կրետե, այնտեղ գտնվող ապրանքները Վենետիկ փոխադրելու համար¹⁶:

Կրետե վերաբնակված հայերի մասին տեղեկությունները հիմնականում երկուսն են: Բայց և՛ մեկը, և՛ մյուսը հանդիպում են այն փաստաթղթերում, որոնցով հայտնի է դառնում Փոքր Հայքից ու Պոնտոսից հայերին Կրետե ընդունելու մասին Վենետիկի որոշումը: Այդպիսի որոշում յուրաքանչյուր դեպքի համար անհրաժեշտ էր արդյոք, թե ոչ, հայտնի չէ: Առաջին դեպքում—1363 թ.—կարող է այդ որոշման իրականացմանը խանգարած լինել դրա ընդունելուց երկու ամիս հետո խանդաբուսի բռնկված ապստամբությունը, ինչպես այդ մասին նկատվել է: Բայց այդ որոշումը շուրջ տարվա ժամկետ է նախատեսում, որի ընթացքում [հայերը] որպես վերաբնակվողներ կարող էին առանձնաշնորհումների արժանանալ (ազարակների, տների, Վենետիկի հպատակի): Ապստամբությունը արյան մեջ խեղդվեց 1364 թ., և տուժեցին կղզու երկու ղաղանանքի և ազգությունների բազմաթիվ ղաղվականներ: Հետևաբար ոչինչ չէր խանգարում հայերին գալու 1364 թ., կամ հաջորդող երեք տարվա ընթացքում: Ավելի հավանական է, որ ապստամբությունը պիտի դուրացներ հայերի հաստատվելը, բանի որ այն ոչնչացրեց մեծաթիվ քաղաքային բնակչություն և գործից կտրեց խանդաբուսի բնակիչ առևտրականներին և այլոց¹⁷:

Ինչ վերաբերում է 1414 թ. [հայերի] վերաբնակեցմանը, ապա ոչ մի ներքին հանգամանք չէր կարող դրան խանգարել: Միայն փաստաթղթում խոսք է լինում [հայերի] Կրետեում կամ էլ Երեւանում բնակվելու թույլտվութան մասին և ոչինչ չկա հաստատ վկայող, թե նրանք ի վերջո ուր զնացին: Որ նրանք էլ վերջա չգնացին, եզրակացնում ենք այն իրողությունից, որ չկան այլ վկայություններ էլ վերջապետ հայկական վերաբնակեցումների մասին...

Ահա բնագրով և ամբողջական թարգմանությամբ հրապարակված առաջին փաստաթղթի համառոտությունը:

«1363 թ. հուլիսի 1.

Հայերի պատվիրակություն, պատվիրակ՝ հայերի առևտրականները

Նա Կրետեի դուքսի և Կրետեի խորհրդականների հանձնարարականներով ներկայացավ

Σπυροδωγ, Θ' (1932) 34—38, որ հետազոտողները ուշադրությունը բեռնեց այս հարցի վրա հրապարակելով և թարգմանելով դրան առնչվող փաստաթուղթ: Սակայն Քեոտոկիսը լուր է բյուզանդական ժամանակաշրջանում հայերի՝ Կրետե վերաբնակվելու մասին, ինչպես և՛ 1914 թ. վերաբնակեցման. վերջինս հայտնի է Nollet-ից (Documents Inédits pour servir à l'histoire de la Domination Vénétienne en Crète de 1380 à 1485 par Hippolyte Nollet, Paris, 1892): Մյուսը մասին կենսովի ստորև:

13 Կիլիկյան Հայաստանի (Հ. Բ.):

14 Որ հայերը XVI դ. Կիպրոսում առևտրով էին զբաղված և այնտեղ եպիսկոպոսարան ունեին, վկայում են վենետիկյան փաստաթղթերը՝ հրապարակված VI. Lanansky-ի կողմից. Secrets d'Etat de Venise, Saint-Petersbourg, 1884, էջ 623 և 630. Կիպրոսում կան և Արմենիդես (Հայեր) և Արմենիոփորին (Հայկական դուռը) տեղանուններ: Տե՛ս Տ. Մ. v d o s, Τοπωνυμικὸν Κύπρου, «'Աթոն» IH', էջ 377.

15 'Αναθρημιας 'Αθηνῶν Μνημεια 'Ελληνιστικῆς ιστορίας, Β', I (1936), էջ 17. Misti-ն (Վենետիկի Սենատի որոշումների ժողովածուն Զ. Բ.) հրատարակել է Սպ. Քեոտոկիսը:

16 Նույն տեղում, էջ 139:

17 Այն, որ Misti-ներում մինչև 1400 թվականը հայերի մասին խոսք չի լինում, ավելի շուտ ապացույցն է այն բանի, որ որոշումն իրականացավ: Հակառակը հավանաբար պիտի նշանակեր, որ նախորդ որոշումը չեղյալ է հայտարարվել: Լուծվումը բացատրվում է նրանով, որ հետագայում հարցերը կանոնավորում էր խանդաբուսի համայնքն ու դուքսը իր խորհրդականի հետ [և ոչ Վենետիկի Սենատը—Հ. Բ.]:

Գոժին և հայտնեց, որ ուրախությամբ *ultra famulos II mille Armeniorum*¹⁸ հղան ու կհաստատվեն Կրետեում, եթե հող ստանան և համարվեն վենետիկցի [հպատակներ]: Նրանք հանդարտում ցույց տվեցին մի հին եկեղեցի, որին «Հայոց եկեղեցի» էին ասում, և նրան կից դաշտ (campum, հողատարածություն, որը ժամանակին պատկանում էր հրեաներին), որպեսզի իրենք՝ հայերը այնտեղ կառուցեն տներ և այլն:

Որոշվեց եկեղեցին և անցալում հրեաներին պատկանող հողատարածությունը տալ նրանց, Կրետեի գուբսին և ուրիշներին հանձնարարվեց խանդաքսում նրանց համար տներ հատկացնել: Ինչ վերաբերում է նրանց խնդրանքին՝ համարվել վենետիկցի հպատակներ, ապա որոշվեց, որ հետագա շորս տարիների ընթացքում վենետիկցի հպատակ կհամարվեն նրանք, ովքեր կղղում բնակություն կհաստատեն, և այսուհետև Կրետեի գուբսի իրավասությունը պիտի վերաբերի հայերին, որպես վենետիկցիների, Կրետե ընդունելու ժամկետը երկարացնելու կամ չերկարացնելու: Սահմանվում են նաև վենետիկյան նավերով նրանց փոխադրելու պարագաները, վենետիկցիների համար սահմանված սակացուցակով, կամ զրանից տարբեր¹⁹:

Որ վենետիկցիների տիրույթներում գոյություն ունեին հայաբնակների եկեղեցիներ, մենք իմանում ենք մի փաստաթղթից, որով 1511 թ. հոկտեմբերի 4-ին Վենետիկի ուղղափառ stradioti-ները [զինվորները] սբ. Գեորգի անվան եկեղեցի կառուցելու համար Թուլյուֆու-թյուն են խնդրում, որպեսզի իրենք չլինեն *in peior stato, condition e opinion de quel sonno li eritici armeni et li quali quivi et altrove*, dove domina le Signorie vostre, hanno sinagoge e moschee adorando in lor modo Iddio mal cognossuto da loro²⁰:

Երկրորդ փաստաթղթի միայն ֆրանսերեն ամփոփումն ունենք և մի փոքր հատված՝ հրապարակված Noiret-ի²¹ կողմից:

„1414“ 10 Fevrier.

Abraymus Anteron Arminus demande à venir de Trebizonde avec 830 familles pour habiter la Crète et échapper aux Turcs; on lui offre la Crète ou Negroponte et on lui promet de la traiter comme les autres fidèles: cum faciat pro nostro domino quod loca nostra repleantur gentibus et specialiter personis quae querunt vivere pacifice, juste et sudore suo²².

18 Ավելի քան երկու հազար հայ գերիներա: Այս փաստաթղթի մասին տե՛ս Հայկ Պերպերյանի հոդվածը. «Կրետե գաղթի հայկական ծրագիր մը ԺԴ դարում», «Ապագայ», ԺԳ տարի, թ. 23 նոյեմբեր: 1932: Վերցված է հետևյալ գրքից. Ա. Ալպոլսեհան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրե, 1955, էջ 480, 554—555 (Հ. Բ.):

19 Թեոտոկիսը (Θεοτοκία «Ελλάγιου της ιουδαίας, B' II, էջ 120—121) տարակուսանք է հայտնում վերաբնակեցումը տեղի ունենալու կամ չունենալու շուրջ, նա տեղյակ չէ Noiret-ի կողմից համառոտ կերպով հրատարակված փաստաթղթին, ինչպես և այն քանին, թե որո՞նց էր պատկանում խանդաքսի հին հայկական եկեղեցին: Նրանք ոչ այլ ոք էին, քան բյուզանդական երկրորդ շրջանում գաղթած հայեր:

20 Lamansky, նշվ. աշխ., էջ 062: [Հիշյալ պարբերության թարգմանությունն է. «...վատ դրության մեջ, ձեր դերձխանության սահմաններում, այստեղ կամ այլուր գտնվող հերետիկոս հայերի և անհավատ հրեաների պայմաններում, (հետևեն) նրանց հայացքներին, նրանց, ովքեր սինագոգներում ու մզկիթներում պաշտում են իրենց վատ ճանաչած աստծուն» (Թարգմանությունը իտալերենից՝ Արմեն Զարյանի: Հ. Բ.):

21 Noiret, նշվ. աշխ., էջ 225: Նշենք այստեղ, որ տվյալ փաստաթղթի լատիներեն բնագիրը ծանոթ էր Ղևոնդ Ալիշանին, դրանից պարզվում է, որ հիշյալ հայերը բնակվում էին Տրապիզոնի վենետիկցիներին պատկանող բերդում (in castro nostro Trapesunde): (Ըստ Ալիշանի ընթերցման, հայ ընտանիքների թիվը «ավելի քան 80» էր և նրանք ոչ միայն Տրապիզոնից էին, այլև Սեբաստիայի կողմերից: Տե՛ս Ղ. Ալիշան, Հայ-Վենետիկյան պարելու-թիւնը հայոց և վենետացի ԺԳ—Դ և ի ԺԵ—Զ դար, Վենետիկ, 1896, էջ 176: Հ. Բ.):

22 Այս կիսով չափ ֆրանսերեն և կիսով չափ լատիներեն հատվածի թարգմանությունն է. «Արրահամ Անտերոն Հայը խնդրեց զալ Տրապիզոնից 880 ընտանիքներով՝ Կրետե հաստատվելու և ազատվելու թուրքերի ձեռքից: Նրան առաջարկվեց Կրետե կամ Նեգրոպոնտը և խոսք տրվեց նրանց հետ վերաբերվել ինչպես մնացած հավատացյալների. ծառայեն մեր տերության, որպեսզի մեր երկիրը վերստին լցվի ժողովուրդներով և մասնավորապես այնպիսի մարդկան-
Լրաբեր 8—7

'Αρμενίης (Հայաստան) հրեական հանդիպում է և որպես ազգաբնակիչ, 1428 թ. հունիսի 9-ին Monoli (Մանուկ) Armeni-ն խանիայից՝ հրեաների պարտապանը, օժանդակություն է ստանում վենետիկի Սենատի որոշմամբ²³, իսկպես, վենետիկյան ծագումով կրեոսացի պատմաբան Անդրեաս Կորնարուսը (Corner, Cornelius) խոսում է նիկիփոր Փոկասի ժամանակ Կրետե հաստատված կոստանդնուպոլսեցի ազնվականական ընտանիքների մասին, նրանցից առաջինը նա հիշում է Արմենի ընտանիքը²⁴։ Իրոք, Trivan-ի ժամանակագրության մեջ խանդաբուրի cittadini²⁵ ընտանիքների մեջ (որոնք կամ ազնվականական ծագում ունեն, կամ՝ ավելի փոքր թվով՝ վենետիկյան ազնվականությունից զրկված ֆեոդալներ) հիշվում է Armeni և Armani ընտանիքը²⁶, հիշատակվում է նաև խանիայում բնակվող Armeni cittadini²⁷ (հայ քաղաքացիներ)։ Մասնավոր տեղեկություն համաձայն, անցյալ դարում Սելինուսի Սկլավոպոլսյան կար Արմենակի ընտանիքը։

Վենետիկցիների տիրապետության ժամանակ և թուրքական տիրապետության առաջին երկու դարերում խանիայի շրջանում հայոց առկայության մասին վկայում են խանիայի գերեզմանատան Ավետարանիչ Դուխասի փոքր եկեղեցու մուսուլիմոս խորհրդի հայերեն արձանագրություններով շորս տապանաքարերը, որոնք ծածկում են նույն թվով գերեզմաններ։ Այս արձանագրությունները, դարեր շարունակ տրորվելով եկեղեցի մտնողների կողմից, մաշվել են և մոտ հինգ տարի առաջ, երբ եկեղեցին ի հիմանք վերանորոգվեց և ընդարձակվեց, հանվեցին այնտեղից և նետվեցին բակը։ Մենք բազմիցս խնդրեցինք խանիայի հնագիտական ծառայությունը, որ վերցնի դրանք այնտեղից։ Այս արձանագրությունների հրապարակումը կրթացներ սուլն ներդրումը, եթե այդ բանը հնարավոր լիներ անել։ Սակայն հայերեն իմացողները, որոնց ես դիմեցի, չկարողացան դրանք ամբողջությամբ ընթերցել, ոչ էլ որոշել նրանց գրության ճիշտ ժամանակը։ Նախընտրեցի չհրատարակել նրանք պարզ լուսանկարչությամբ։ Բոլոր դեպքերում երկու ավելի հսկեր դժվարընթեռնելի են ավելի շուտ բազմաթիվ հապավումների, քան փլացած լինելու պատճառով և վերաբերում են 1600 թ. շուրջ ընկած ժամանակաշրջանին, իսկ մնացածները թվում է թե գոնե մեկ դարով ավելի նոր են։ Չորսն էլ ունեն հայերեն գրված, սովյալ դեպքի համար անհրաժեշտ, «Այս է տապան հանգստեան» բառերը²⁸։

Նմանապես Հերակլիոսի²⁹ հոգևոր գաղափարների դիվանի թարգմանիչ պրն. Ն. Ստավրինիդիսը ինձ հայտնեց, որ 1870—1700 թթ. փաստաթղթերը, որոնք ինքը թարգմանում է, լի են խանդաբուրի հայերի վերաբերյալ տեղեկություններով, այն աստիճան, որ ենթադրել է տալիս, որ Կրետեի մայրաքաղաքը հայերով էր բնակեցված։ Դրա բացատրությունը հետաքննելով է գտնում նա, ով գիտե, որ քաղաքի հույն և այլ եվրոպացի բնակչությունը խանդաբուր [թուրքերի] հանձնելուց հետո գնաց իշխող վենետիկցիների ետևից, որի հետևանքով քաղաքը թուրքերի կողմից գրավվեց բնակիչներից դատարկված։ Բայց ինձ հավանական է թվում, որ

ցով, որոնք կարող են իրենց քրտինքով խաղաղ ու արդար Կարեյում (լատիններեն հատվածի թարգմանությունը՝ Գրիգոր Տիրացյանի շ. Բ.)։

²³ Noiret, նշվ. աշխ. էջ 323։

²⁴ Sht'n Fl. Cornelius, Creta Sacra, Venetia, 1755, I, էջ 74, որտեղ էլ՝ խնդրառաջ հիշատակությունը, որը վերահրատարակվել է Կ. Ն. Ստավրինիդիսի կողմից. K. N. Σά-θ α, 'Ελληνικά ἀνεκδοτα, 'Αθήναι, 1867 B', σελ. 187։ E. Gerland, Histoire de la Nobless Cretoise au moyen âge, Paris, 1907, p. 180 և այլն։

²⁵ Քաղաքացի, քաղաքաբնակ (Շ. Բ.)։

²⁶ IAK-ում ('Ιστορικὸν 'Αρχεῖον Κρήτης) գտնվող ձեռագրեր 20-րդ էջը։

²⁷ Նույն տեղում, էջ 24։

²⁸ Թե ինչքան դժվար է նման արձանագրությունների ընթերցումը, ցույց է տալիս Ն. Ի. Ծանոցապուր (N. I. Γιαννόπουλος, 'Αρμενικά Μνημεία ἐν Ἀλυσσῷ, Δελτίον τῆς 'Ιστορικῆς καὶ Ἑθνολογικῆς Ἑταιρίας τῆς Ἑλλάδος, τόμ. Η' (1923), էջ 83—86), հրատարակելով 1961 թ. մի հայերեն արձանագրություն Ալմիրոսի Պլատանիոնից [Ալստեղ նշան, որ Ն. Տոմաշուկիսը մեջ է բերում ՇԱյն է տապան հանգստեան և թեղ յանցանա բառերը՝ երկու տարբեր տապանաքարերի արձանագրություններից, որոնց մասին տե՛ս ստորև, Դ. Սավալանի հոգվածում—Շ. Բ.]։

²⁹ Քաղաք Կրետեում (Շ. Բ.)։

դրանից հետո էլ հայերը գաղթեցին Կրետե: Իսկ մեր դարի դեպքերից առաջ³⁰ եկած հայկական հին ընտանիքներ Կան Արեւելյան Կրետեում³¹:

Դրում էի Խանիայում, 1938 թ. օգոստոսին

ՆԻԿՈԼԱՅՈՍ Վ. ՏՈՄԱՂԱԿԻՍ

Δ. ΣΑΒΑΛΑΝ. Ἀρχαιολογικὰ ἐκτελεσθέντα ἐν τῷ Μεσογείῳ Χερσονήσῳ, «Κρητικὴ Ἑστία» Φεβρουάριος 1962, γράφος II', τεύχος 116, σελ. 277—280.

Դ. ՍԱՎԱԼԱՆ, Հայերեն արձանագրություններ Խանիայի թանգարանում, Երևանում, 1962 թ., փետրվար, 13-րդ տարի. պրակ 116, էջ 277—280:

Խանիայի հնադիտական թանգարանում, թանդարանի Մայր ցուցակի E 45, E 46, E 47 և E 48 համարների տակ գտնվում են հայերեն արձանագրություններով շորս մարմարե տապանաքարեր:

Այդ տապանաքարերից երեքը՝ E 45-ը, E 46-ը և E 48-ը, գրված են նույն ձևով ու ոճով, նրանց բնագրերը մեծ մասամբ փչացած են և այն տպավորություն են թողնում, որ օգտագործվել են որպես աստիճանաքարեր կամ, որ ավելի հավանական է, գուցե՝ շեմաքարեր: Ինչ վերաբերում է մյուսին՝ E 47-ին, այն միանգամայն այլ ոճի և տիպի է, ավելի գեղարվեստորեն պարզաված, նախորդներից ավելի երկարաշունչ բնագրով և ավելի լավ է պահպանված:

1961 թ. օգոստոսին թանգարան կատարած իմ այցելության միջոցին (այն ժամանակ թանգարանը տեղակայված էր նավահանգստի մոտ գտնվող թուրքական մզկիթում) ես նկատեցի այդ տապանաքարերը, հիշեցի, որ Աթենքի համալսարանի մեծարդո պրոֆեսոր պարոն Ն. Տոմազակիսը անցյալում զբաղվել էր Խանիայի հայերեն արձանագրություններով: Փետրեցի նրա խնդրո առարկա հոգվածը՝ «Ներդրում Կրետեում սլավոնական, հայկական և թուրքական վերաբնակեցումների մասին ուսումնասիրությունների մեջ», լույս տեսած «Կրետական ուսմանց ընկերության Տարեգրք» երկրորդ հատորում, 1939 թ., որից ստորև բերում եմ մեզ հետաքրքրող հատվածը.

Տվե՛ննտիկցիների տիրապետության ժամանակ և թուրքական տիրապետության առաջին երկու դարերում Խանիայի շրջանում հայոց առկայության մասին վկայում են Խանիայի գերեզմանատան Ավետարանիչ Հուկասի փոքր եկեղեցու մուտքի մոտ գտնվող հայերեն արձանագրություններով շորս տապանաքարերը, որոնք ծածկում են նույն թվով գերեզմաններ: Այս արձանագրությունները, դարեր շարունակ տրոփվելով եկեղեցի մտնողների կողմից, մաշվել են և մոտ հինգ տարի առաջ, երբ եկեղեցին և հիմանց վերանորոգվեց և ընդարձակվեց, հանվեցին և տնտնդից և նետվեցին բակը: Մենք բաղմիջս խնդրեցինք Խանիայի հնադիտական ժառանգությանը, որ վերցնի դրանք այնտեղից: Այս արձանագրությունների հրապարակումը կրացներ սույն ներդրումը, եթե այդ բանը հնարավոր լիներ անել: Սակայն հայերեն իմացողները, որոնց ևս դիմեցի, չկարողացան դրանք ամբողջությամբ ընթերցել, ոչ էլ որդշել նրանց գրության ճշտ ժամանակը: Նախընտրելով շրտատարակել նրանք պարզ լուսանկարությամբ: Բո-

³⁰ Հեղինակը հավանաբար նկատի ունի հայկական շարդերը և 1922 թ. Զմյուռնիայի աղետը (Հ. Բ.):

³¹ Կրետեի 1881 թ. մարդահամարի համաձայն կղզում բնակվում էին ութ հայեր: Տե՛ս N. Σαυρατζη, Στοιχειώδη Κρητική, էջ 201:

1 Պրն. Տոմազակիսը ծանոթագրության մեջ ավելացնում է, թե ինչքան դժվար է նման արձանագրությունների ընթերցումը, ցույց է տալիս Ն. Ի. Ցաննուպուլսը... Հրատարակելով 1691 թ. մի հայերեն արձանագրություն Ալմիրոսի Պլատանիոնից (տե՛ս վերը, Ն. Տոմազակիսի հոդվածի մեր թարգմանության մեջ, էջ 99, ծանոթ. 28—2. Բ.):

Սրանց վրա ես ավելացնում եմ, որ թանգարանի այցելությունից հետո դիմեցի 1910 թ. Խանիա հաստատված հայազգի պրն. Անտոն Սահակյանին, որը համեմունքների և շաքարեղենի մի փոքր խանութ ունի, և հարցրեցի, թե նա տեղյակ է թանգարանի հայերեն տապանաքարերի մասին: Նա ինձ պատասխանեց, թե իսկապես այնտեղ կան, և որ Փոքր Ասիայից 1922 թ. Խանիա գաղթած ոմն Աբրահամ Բեկյան, մասնագիտությամբ հովանոցներ սարքող, մի գրագետ մարդ, ուսումնասիրել է դրանք, բայց չկարողանալով մեկնաբանել, նրանց ընդօրինակությունը ուղարկել է Փարիզում ապրող բանաստեղծ և բանասեր Մինաս Չեղազին, որից

լոր դեպքերում երկու ավելի հենքեր դժվարընթեռնելի են՝ ավելի շուտ բազմաթիվ հապավումներին, քան սխալած լինելու պատճառով և վերաբերում են 1600 թ. շուրջ ընկած ժամանակաշրջանին, իսկ մնացածները թվում է թե գոնե մեկ դարով ավելի նոր են: Զարեհ էլ ունեն հայերեն գրված, սովյալ դեպքի համար անհրաժեշտ, «Այս է տապան հանգստեան» բառերը:

Ահա այս արձանագրությունների վերաբերյալ իմ մեջ հետաքրքրություն առաջացավ, բայց դրանք ընթերցելու փորձ անել անհնարին էր, քանզի դժբախտաբար տապանաբարբր դրված էին այնպես, որ նայում էին դեպի պատը: Ինձ օգնեց թանգարանի տնօրենի տեղակալ պրն. Մարուկակիսը, որը պահակ պրն. Գերոնտակիսի (յուրատեսակ ինքնուսարվեստագետ-նկարիչ, փորագրիչ և քանդակագործ) միջոցով հատուկ թղթի վրա ինձ համար հանեց էստամպաներ, Ֆասեհինգ օր ահա ես ուսումնասիրեցի դրանք և կամաց-կամաց կարողացա կարդալ դրանց բնագիրը, լրացնել մաշված բառերը և թարգմանել [հունարեն—Հ. Բ.]: E 48 տապանաքարի մաշված բառերը և թվականը վերականգնել հնարավոր չէի, ինչպես և E 47-ինը, որից պակասում են միայն թվականի տասնամյակն ու տարին նշանակող տառերը:

Ստորև ներկայացնում եմ տապանաքարերի իմ ուսումնասիրության արդյունքները.

Տապանաքար E 45, լրացված է և լրիվ կարդացված: Հապավումներ չկան:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ

ՔԱՆԱՔԵՌԻՑԻ ՑՈՎՀԱՆՆԷՍԻ ՈՐԴԻ

ՄԱՐՏԻՐՈՍԻՆ ՈՐ ՓՈԽԵՑԱԻ

ԹՎԻՆ 1178 ՄԱՐՏԻ 1-ին (այն է՝ 1729 թ. մարտի 1-ին):

Տապանաքար E 46, լրացված է լրիվ կարդացված: Հապավումներ չկան:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ

ՔԱՆԱՔԵՌԻՑԻ ՑԱՐՈՒԹԻՒՆԻ ՈՐԴԻ

ՄԻՐԱՏԻՉ, ՈՐ ՓՈԽԵՑԱԻ.

ԹՎԻՆ 1172 Ի ԱՊՐԻԼԻ 11-ին (այն է՝ 1723 թ. ապրիլի 11-ին):

Տապանաքար E 47, լրիվ կարդացված, բացի թվականի մի մասից: E 47 տապանաքարը ավելի գեղարվեստորեն է պատրաստված, ունի ավելի գեղեցիկ տառեր և տրորվելուց տողերի աջ մասը շատ քիչ է վնասվել: Սակայն այստեղ, ինչպես և մյուս արձանագրություններում, բառանշատում չկա, կան լիզատուրաներ, որոնք հնարավոր է վերծանել տարբեր ձևով. յուրաքանչյուր տողի վերջին 2 կամ 3 տառերը գրեթե ջնջված են: Այսպիսով, թեև տապանաքարը գրեթե անվնաս է, նրա ընթերցումը դառնում է թեական, նամանավանդ, որ քանդակող արվեստագետը կամ բնագիրը հեղինակողը այն կազմել է հանգավոր, թույլ է տվել շարահյուսական և ուղղագրական սխալներ: Հակառակ այդ բոլոր դժվարություններին, կարողացա բնագիրն ուսումնասիրելով կարդալ այն և թարգմանել հունարեն: Միակ տեղը, որ մուք է մնում, դա հանգուցյալի մահվան թվականն է, որ նշված է 8-րդ տողի վերջում և, ինչպես մնացած տողերը, այն ևս մաշված է: Այսպիսով ընթեռնելի է միայն հազարը և ենթադրաբար՝ հարյուրը, իսկ տասնամյակի ու տարվա մասին հնարավոր չէր գաղափար կազմել: Հայոց 1100 թվականը համապատասխանում է 1651 թ., հետևաբար տապանաքարը թվագրվում է 1651-ից

պատասխան է ստացել, թե առեղծվածի լուծման համար դիմել է Լոնդոն Դրանից հետո չգիտեմ, թե ինչպես վերջացավ հարցը:

2 Մանոթ. հեղինակի. Միրատը հատուկ անուն է, գուցե թուրքական Մուրատը:

3 Դ. Սավալանն այստեղ տալիս է մի ընդարձակ ծանոթագրություն հայոց թվականի վերաբերյալ, որը կրճատում ենք: Նշենք, որ արձանագրության մեջ թվականը, հարկավ, բերված պիտի լինի հայերեն այբուբենի տառերով, որոնք, թյուրիմացություններից խուսափելու համար, չենք վերականգնում (Հ. Բ.):

մինչև 1750⁴։ Համենայն դեպս որոշ է, որ այս տապանաքարը թուրքական տիրապետության շրջանից է, քանզի նրա արձանագրության մեջ կա երկու թուրքերեն բառ։ Առաջին բառը 4-րդ տողում «ձանա-ն» է, որ «հողի» է նշանակում, կամ «սիրելի»։ Երկրորդը՝ 7-րդ տողում «խո-ձա», որ նշանակում է «ուսուցիչ»։ Այդ երկու թուրքերեն բառերի առկայությունն ինձ համոզում է, որ արձանագրությունը գրվել է թուրքական և ոչ վենետիկ տիրապետության շրջանում⁵։

Տապանաքարի արձանագրությունը հետևյալն է։ Վերականգնված են հապավումները.

ՈՐ ՎԱՄՆ ԱՆՁԱՓ ՍԻՐՈՑ ՔՈՑԻՆՑ
ՔԱՆ ԻՊ ԿՈՒՍԷՆ ԱՌԵՐ ՄԱՐՄԻՆ
ԱՂԱՁԱՆԱԻՔ ԱՍՏՈՒԱՄԱՍ[Ն]ԻՆ
ԹՈՂ [Ջ]ՑԱՆՑԱՆՍ ՑՈՒՍԷՓՃԱՆԻՆ
ՈՐ է Ի ԳԱԻԱՌԷՆ ՑԵՐԵԻԱՆԻՆՑ
ԵԻ Ի ԳԵՂՋԷՆ ՔԱՆԱՔԵՌԻՆ
ՈՐԴԻ ԽՈՃԱ ԿԻՐԻԷՂԻՆ
ՀԱՆԳԵԱԼ 11.. ԹՎԻՆ
Ի ԱՄՍԵԱՆ ՑՈՒԼԻՍ ՈՒԹԻՆ
ՕՐՆ ԿԻՐԱԿԻ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Տապանաքար E 48, մասամբ կարդացված։

Սա միակ տապանաքարն է, որի մաշված տառերը հնարավորություն չտվեցին ինձ իմաստավորելու բնագիրը։ Բնագրի միակ տեղը, որը կարողացա կարդալ, առաջին երեք տողերն են, որտեղ գրված է. «ԱՅՍ Ե՛ ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿՕ»։ Հաջորդող չորրորդ տողը, որի առաջին բառը կիսով չափ շեղված է և շարունակություն է նախորդ տողի «ԿՕ»-ի, թվում է B—PT է, հետևաբար՝ «ԿՕ», «ԿՕB—PT»-ը բոլոր դեպքերում մահացած տղամարդու կամ կնոջ անուն պիտի լինե՞ր⁶։ Չորրորդ տողի երկրորդ բառը՝ «ՔԱՆԱՔԵՆ», ոչ պարզ կերպով շարունակվում է հինգերորդ տողում և գուցե լրացվում է «ՔԱՆԱՔԵՌԻՆ»-ի, բայց իմաստ չի ստացվում, քանզի հանգուցյալն արդեն կոչվել է «ԵՐԵՒԱՆՑԻ»։ Այլ անհարթություն է ներկայացնում հինգերորդ տողի երկրորդ մասը, որտեղ գտնվում են OPTZAN տառերը (կարդա ՈՒՃԱՆ—Ջ. Բ.), որոնցից PTZA-ն (ՌՃԱ) կարող է վերծանվել որպես 1101 (այն է 1652/3 թ.), բայց տվյալ բառի տեղը թվական նշելու տեղը չէ։ Բացի այդ OPTZAN բառի վեց տառերի¹⁰ երեք վերջինները TZAN (ՃԱՆ—Ջ. Բ.) կարող են ընթերցվել որպես «ձան» (ձան) (սիրելի, ինչպես E 47 տապանաքարում), այդ դեպքում պիտի ենթադրել, որ վեցերորդ տողը բովանդակում է հանգուցյալի անունը, որ պիտի լինի—MTBAPT։ Անվան երկրորդ մասը՝

⁴ Ինչպես կտեսնենք, արձանագրությունը կազմված է ութվանկանի ոտանավորով՝ հասածը չորրորդ վանկից հետո։ Միակ խախտումը 5-րդ տողում է (եթե է ի գաւառէն յԵՐԵԱ-նին)։ Եթե թիվը կրող 8-րդ տողում խախտում չկա, ապա թվականը միայն 1100 կարող է լինել (սահմանափակ հազար հարիւր թիվն) (Ջ. Բ.)։

⁵ «ձան»-ն այստեղ առանձին բառ չէ, ինչպես կարծում է Սավալանը, այլ Յուսէփձան անվան մաս է կազմում (մենք ուղղել ենք), իսկ «խոձա»-ն ոչ թե ուսուցիչ է նշանակում, այլ վաճառական (Ջ. Բ.)։

⁶ Սավալանը տառադարձել է KOXIN (Ջ. Բ.)։

⁷ Սավալանը գրում է՝ KANT, որ անիմաստ է (Ջ. Բ.)։

⁸ Սավալանը տառադարձում է XEPEBANIN (Ջ. Բ.)։

⁹ Գուցե ՔՈՒՐԴ է եղել։ Բայց այդ դեպքում անրաժեշտ է պատկանելություն ցույց տվող «Ե» կամ «ԵՆ» վերջավորությունը։ Բոլոր դեպքերում եթե «ԿՕ»-ն ճիշտ է, ապա հայերեն բնագրում պիտի լինե՞ր «ՔՈ» կամ «ԳՈ» և ոչ մի դեպքում «ԵՈ»։ Զանգի Սավալանը «Կ»-ն արևմտահայ արտասանությամբ «Գ» է կարդում (Ջ. Բ.)։

¹⁰ Իրականում՝ հինգ։ «ձ»-ն Սավալանը տառադարձում է TZ. հունարենում չկա «ձ» հնչյունը, հետևաբար և համապատասխան տառը (Ջ. Բ.)։

BAPT, նշանակում է վարդ: Հետևաբար կարող ենք ենթադրել, որ այդ անունը պատկանում է մահացածին, կամ նրա հորը: Տապանաքարի արձանագրության մնացած մասը լրիվ չնշված է:

Այսպիսով E 48 տապանաքարի ընթեռնելի մասը ասում է. «Աստ հանգչի երեանցի (կամ քանաքեռցի) Վարզը (կամ Վարդի որդին)» և ուրիշ ոչինչ¹¹: Ես չեմ տարակուսում, որ պարոն Տոմադակիսի հողվածում հիշվող շորս տապանաքարերի արձանագրությունները հենց նրանք են, որ գտնվում են Խանիայի Թանգարանում, որոնք, ըստ երևույթին, Խանիայի հնագիտական ծառայության կողմից վերցվել են սուրբ Ղուկասի եկեղեցու բակից: Նրանց [հունարեն] այս թարգմանությունը գուցե մի փոքր ներգրում լինի դրանց ուսումնասիրության գործում:

Խանիա, 28 գեկտմբերի, 1961 թ.

Դ. ՍԱՎԱԼԱՆ

¹¹ Մեր կարծիքով այս արձանագրության մեջ հանդես եկող ՈՒՃԱՆ տառերի մեջ պետք է անուն փնտրել (գուցե [ՅԱԿ]ՈՐԺԱՆ, նախորդ ՅՈՒՍԷՓԱՆՆԻ հետեղականությամբ): Բոլոր դեպքերում կասկածելի է MTBAPT տառադարձությունը (2. Բ.):